ՀՏԴ 941(479.243)+941(479.25) Իրավագիտություն

Մալիկ Թելունց
պատմական գիտ. թեկնածու,
Գորիսի պետական համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ

«ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԸ». ԴՐԱ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԼՂՀ և ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ և ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՊՐԻԼՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՏՐՎԱԾՔՈՎ

Հոդվածում պատմաիրավական գնահատմամբ քննարկվում են ԼՂՀ-ի շուրջն ստեղծված կոնֆլիկտի և դրա լուծման ուղիների հարցերը՝ անելով կոնկրետ առաջարկություններ: Աշխատության նպատակը հնարավորինս անաչառ ձևով հիմնախնդրի պատմաիրավական որոշ կարևոր ասպեկտներ ներկայացնելն է: Ազատագրական պայքարի շնորհիվ միջազգային-իրավական ճանաչում ստացած՝ իր ինքնորոշման իրավունքն իրացրած, ԼՂՀ-ն ձեռք է բերել փաստական անկախություն, որը սակայն անարդացիորեն միջազգային- իրավական ճանաչում չի ստացել՝ որն էլ՝ այսպես կոչված «Մեծ տերությունների» նման ոչ իրավաչափ մոտեցումն, իր հերթին հայտնի չափով նպաստում է համարյա ամեն օր զոհեր բերող «մշտական պատերազմական վիճակի» շարունակմանը երկու հարևան պետությունների, ժողովուրդների միջև … Ուստի խնդիրն այդ առումով և ընդհանրապես մի ամբողջ ժողովրդի ինքնորոշման ճանաչման առումով մնում է որպես ակնհայտ կենսական ու արդիական և դա լրացուցիչ հիմնավորման կարիք չունի: Ղարաբաղյան հարցի լուծման կոնկրետ առաջարկություններն տրվում են հոդվածի բուն բովանդակության մեջ: Հոդվածում շոշափվում են նաև ինքնորոշման իրավունքի և տերիտորիալ անձեռնմխելիության միջազգային-իրավական սկզբունքները՝ Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման ասպեկտով:

Ամփոփման մեջ տրվում են նաև հեղինակի կարծիք-գնահատականները ազգային միասնության ստեղծման գործում՝ որպես նաև Ղարաբաղյան հարցի հայամետ՝ արդարացի լուծման կարևորագույն երաշխիքի:

Բանալի բառեր՝ ազատագրական պայքար, Դավիթ Բեկ, մելիքություն, Պետրոս I, սղնախ,տարածք, պետականություն

Малик Телунц
к.и.н.,
Горисский государственный университет

«КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ» ПУТИ И ПРЕДПОСЫЛКИ ЕГО РЕШЕНИЯ: В СВЯЗИ С 25-И ЛЕТНИМ ЮБИЛЕЕМ НЕЗАВИСИМОСТИ НКР И РА И ПРОБЛЕМА СОЗДАНИЯ НАЦИОНАЛЬНОГО ЕДИНСТВА:В СВЕТЕ АПРЕЛЬСКИХ СОБЫТИЙ

В статье обсуждаются вопросы конфликта вокруг Нагорного Карабаха и пути его решения. Цель работы: по возможности объективно представить некоторые конкретные предложения по его решению. В результате справедливой освободительной борьбы народ Нагорного Карабаха приобрел свою фактическую независимость, тем самым реализуя свое международно-признанное право на самоопределение. Но несмотря на это, независимость НКР пока еще не признана международным сообществом; именно такой неправомерный подход так называемых «великих держав» во многом способствует продолжению состояния «вечной войны» между двумя соседними государствами, народами; в результате чего почти каждый день погибают люди…

В содержании статьи представлены конкретные оценки, суждения и предложения по обсуждаемым проблемам, а также затрагиваются вопросы, связанные с созданием социального, национального единства в двух армянских республиках, как решающей гарантией и для решения Карабахского вопроса.

Ключевые слова: освободительная борьба, Давид Бек, меликство, Петр I, сгнах, территория, государственность

Malik Telunts
Doctor of History
Goris State University

KARABAGH CONFLICT: ITS SOLUTION AND PREREQUISITES IN THE EVE OF THE 25TH ANNIVERSARY OF INDEPENDENCE OF THE REPUBLIC OF NAGORNO-KARABAGH AND REPUBLIC OF ARMENIA AS WELL AS THE MAIN ISSUE OF THE CREATION OF A NATIONAL UNITY WITHIN THE FRAME OF APRIL EVENTS

The article concerns Karabagh conflict and some issues of its solution by making concrete suggestions. The research aims at representing some important aspects are historical facts of the conflict as fairly as possible. Due to liberation struggle the Republic of Nagorno-Karabagh has de facto gained independence through a legal international recognition and implementation of its sovereignty. Unfortunately its sovereignty hasn't gained an international recognition because of the illegal approach of so-called "Great Countries" and this somehow contributes to a permanent war situation causing daily deaths between the two neighbor countries and their peoples. Thus, from this point of view and generally from the point of view of the recognition of the sovereignty of a whole nation it is obvious that the problem is vital and up-to-date and doesn't require any argumentation.

Concrete suggestions about the solution to Karabagh problem are made in the article. The article also refers to the main international and legal principles of the right of sovereignty and territorial immunity in the case of Karabagh conflict.

The summary represents the author's views and evaluations of the creation of a national unity as an important guarantee for the fair Armenian-centered solution of the Karabagh problem.

Keywords: the liberation struggle, David Beck, melikate, Peter I, territory, statehood.

Արցախի՝ նրա մի մասը կազմող այսօրվա Լեռնային Ղարաբաղի պատմությանը՝ նրա պատմահիրավական ասպեկտներին մենք քանիցս անդրադարձել ենք մեր հրապարակի վրա գտնվող աշխատություններում.մասնավորապեսռուսերեն լեզվով լույս տեսած. **«Ռուսաստանը և Արցախի և Սյունիքի ազատագրական շարժումը XVIII դարի առաջին երեսնամյակում: ԼՂՀ ինքնորոշման մի քանի հարցեր»** («Էդիթ Պրինտ» հրատ., Երևան 2014), ինչպես նաև վերջերս համացանցում («Հայագիտական հետազոտություններ») տեղադրված մեր մի հոդվածում և պ-ն Ժիրինովսկու հայտնի հայտարարության կապակցությամբ նրա և ՌԴ նախագահին ուղղված իմ նամակում: Արցախ-Ղարաբաղի և նրանից անջատված տարածքների հայկական լինելու հարցը ոչ մի առավել կամ պակաս չափով ողջամիտ մարդու առավել ևս պատմաբանի, քաղաքական գործչի մոտ կասկածանք չի կարող առաջացնել (ավելի ճիշտ կլիներ այդ տարածքները չազատագրեինք, քան ազատագրեինք և նորից հանձնեինք դրանք զավթողին՝ նրանց այդ իրավունքն ճանաչելով օրինական…). ուստի այդ առումով, այս հոդվածում մենք դրան՝ պատմությանն, անդրադառնում ենք ակնարկային ձևով. ավելի շատ ուշադրություն դարձնելով հիմնահարցի լուծմանն ուղղված ուղիներին՝ առաջարկություններին, մասնավորապես կապված այսպես կոչված **Մադրիդյան սկզբունքների հետ**: Այնուամենայնիվ, ինչպես արդեն ակնարկեցի, վերստին հիշեցնենք, որ աշխարհի ոչ մի քարտեզում Անդրկովկասյան Ադրբեջաներկրամաս, առավել ևս պետություն, պատմությանըհայտնի չիեղել՝մինչևԱնդրկովկասյանարհեստածին՝ մերօրյա Ադրբեջանի ստեղծումը:«Ժամանակակից«ադրբեջանցիների նախահայրերը»՝ կովկասյան թաթարները, որոնք իրավամբ, ոչ մի անուն, անվանում չունեին և այդ մարդիկ չգիտեին, թե իրենք ի՞նչ ազգի ներկայացուցիչներ են, վերջապես ովքե՞ր են, ու՞մ են ներկայացնում, 1918թվականի մայիսի 27-ին դուրս գալով Սեյմից (Անդրկովկասյան-Մ.Թ.) կազմակերպում են՝ հռչակում են**Արևելյան Կովկասյանիսլամական Հանրապետությունը** (ընդգծումը մերն է-Մ.Թ.): 1920թ. ապրիլին խորհրդային Կարմիր բանակը մտնում է այդ տարածք: Մուսաֆաթական ազգայնամոլ կառավարությունը տեղը զիջում է խորհրդայինին: Եվ խորհրդային Մոսկվան, քանի որ ձգտում էր համաշխարհային հեղափոխության, համաշխարհային խորհրդային երկրների թիվն ավելացնել, ուստի Թուրքիայի ջանասիրությամբ այդ տարածքին տվեց Իրանի հյուսիսային նահանգ՝ Ադրբեջան-Ատրպատականի անվանումը: Այսպես 1920թ ապրիլի 28-ին հռչակվեց Ադրբեջանի խորհրդային Հանրապետությունը և թաթարները դարձան ադրբեջանցիներ»[1]:Ակադեմիկոս Բարտոլդը (և ոչ միայն նա) հաստատում է, որ «նոր պետության» համար անուն ընտրելու փնտրտուքում հարմար համարվեց Ադրբեջան անունը, ըստ որում նաև հեռավոր նպատակ ունենալով իսկական ու միակ Ադրբեջանի՝ իրանական, հետ դրանց ապագա միավորման, անշուշտ խորհրդային դրոշով, հնարավորությունը[2]: Բազմաթիվ սկզբնաղբյուրներ, այդ թվում օտար, նաև մուսուլմանական, հաստատում են **կովկասյան թաթարների*** 13-րդ դարից՝ թուրք- մոնղոլական արշավանքներից սկսած և հետագայում, Անդրկովկաս և այլ վայրեր մուտք գործելու՝ **Անդրկովկասում եկվոր լինելու, տարբեր եղանակներով բնիկներին դուրս մղելու՝ ուծացում, կոտորած ևն, մասին.** այդ պայմաններում նրանք փոխանակ ամոթ զգան, որ իրենց գազանություններից հետո դեռ որոշ բնիկներ իրենց պատմական հողերի վրա մնացել են ու գոնե «մեծահոգաբար» ճանաչեն նրանց ինքնորոշման իրավունքը՝ ընդհակառակը տարածաշրջանում Թուրքիայից բացի մնացած հողերը համարում են իրենցը…Հատկապես անհեթեթ ու զավեշտալիէ Քուռ գետի ձախափնյա տարածքը զբաղեցրած՝ պատմական անցյալում Աղվանք, Ալբանիա երկրի, և այն էլ քրիստոնյա, ժառանգորդը հայտարարելու «ադրբեջանական»«գիտնականների» և քաղաքական շրջանակների փորձերը. (նրանք հայերին նույնիսկ «մեղադրում են» աղվանական վանքերն ու եկեղեցիներն իրենցը՝ հայկական համարելու մեջ. մի պահ ընդունենք, որ դա այդպես է, թեպետ դա ևս աղաղակող սուտ է, բայց ինքը՝թուրքալեզու այլակրոն այդ ցեղն ինչ կապ ունի այդ վանքերի, եկեղեցիների հետ…Առավել ևս բանականության լիակատարկորուստ կամ անամոթության գագաթնակետ է հիշեցնում Հայաստանի արևելյան մասը՝ ներառյալ ներկայիս ՀՀ տարածքը «Արևմտյան Ադրբեջան» համարելը… փորձերը):Եվ,այնուամենայնիվ, փաստ է, որ այսօր էլ իրար հետ՝ կողք-կողքի, շարունակում են ապրել, և պետքէ ապրեն, երկու ժողովուրդները՝«թուրք-ադրբեջանցիները» կամ «կովկասյան թաթարները» ուրիշի (ուրիշների՝ ոչ միայն հայերի…) հողերի վրա և հայերն իրենց վաղնջական հողերի վրա: Փաստ է նաև Ղարաբաղի շուրջը ստեղծված կոնֆլիկտը[3]:

---

[1]**Սերգեյ Ավագյան,** Ցեղասպանությունն Արևելյան Հայաստանում, «ՎՄՎ -ՊՐԻՆՏ» հրատ., Երևան, 2014, էջ 328, և ուրիշ.:

[2]Տես**Академик В.В. Бартольд**, Сочинения, т2, ч. 1. Общие работы по истории Средней Азии. Работы по истории Кавказа и Восточной Европы. Изд. Восточной литературы, Москва 1963 сс. 656, 669-670, 703, 773, 775-783 ևհտ.:

*Ճիշտկլիներնրանցթուրքերանվանելը՝որովհետևգոնելեզուլուրջնմանություններունիթուրքերենիհետ:

[3]Ավելիմանրամասնտե սԱկադեմիկ**Բարտոլդ**В. В., Сочинения, т 2, ч 1. Общие работы по истории Средней Азии. Работы по истории Кавказа и Восточной Европы. Изд. Восточной литературы, Москва 1963, Мирза Джамал Джеваншир Карабахский, История Карабаха. Изд. АН Азербайджанской ССР. Баку, 1959, **ԷնաէթոլլահԻէզա**, ԱզարբայջանեւԱռան(ԿովկասեանԱլբանիա),Երևան, 1994թ՝թարգմանությունպարսկերենիցևուրիշ.,նաև՝**Մ.Մ.Թելունց**, Հայ իրավաքաղաքական, պետաիրավականմիտքը Հայաստանի ազատագրման ծրագրերում: Արցախին Սյունիքի ազատագրական պայքարը 1722-1730թթ.և հայկական պետականության վերականգնման ջանքերը, «Հրազդան» հրատ., Երևան, 2003, **Телунц М.М.,**Из истории освободительной борьбы Сюника и Арцаха.Некоторыеаспекты самоопределения НКР. Изд. «Эдит Принт», Е.,2006, **Телунц М.М.,** Россия и освободительное движение Сюника и Арцаха в первом тридцатилетии XVIII века. Некоторые вопросы самоопределения НКР. Изд. ,,Эдит Принт'', Ереван, 2014,նաև՝

Ակնհայտ է,որ անցյալ դարի 80-90-ական թվականներին իրականացնելով **ինքնորոշման** իր իրավունքը հայկական պատմական Արցախ նահանգի **(պատմական Փոքր Սյունիք)** մի մասի վրա գոյատևող, ըստ որում հայ ազգային մեծամասնություն կազմող, Ղարաբաղի ժողովուրդն ազատագրական պայքարի շնորհիվ հասել է փաստական անկախության՝ այն պահպանելով մինչև այսօր:

Ինչպե՞ս են ցանկանում լուծել «Ղարաբաղյան կոնֆլիկտը» «տոտալիտար ԽՍՀՄ-ինհակադրվող»«դեմոկրատական Եվրոպան», «դեմոկրատական միջազգային հանրությունը»և այսպես կոչված «Մեծ տերությունները», բնականաբար նաև այսպես կոչված Մինսկի խումբն ու իր «երկկենցաղ» գործելակերպով համառորեն Բյուզանդիայի ճակատագրին ընդառաջ գնացող Ռուսաստանը և մյուս. (այդ թվում, որքան էլ զարմանալի լինի, գուցե նաև մեր «անկախ» պետության ղեկավարները…): Փորձենք այդ հարցին պատասխանել համացանցում տեղադրված, մեզ հասանելիմի շարք միջազգային փաստաթղթերից, սկսելով այսպես կոչված «Մադրիդյան սկզբունքներից»(ընդունված 29 նոյեմբերի 2007թ.)որոնց իրենց «հավատարմությունն են հայտնել»և մինչև այսօր հայտնում թե՛ ադրբեջանական, թե՛, որքանէլ զարմանալի է, հայկական կողմը…(**իհարկե «ղեկավարները»և ոչ թե ժողովուրդը…**): Այն նախատեսում է (թարգմանաբար ռուսերենից).

1. Լեռնային Ղարաբաղի շուրջ գտնվող տերիտորիաների տարածքների (հայկական ուժերի կողմից **ազատագրված**՝ հայոց ազգային-պատմական տարածքները. ըստ ադրբեջանցիների՝ **օկուպացված**…) վերադարձ Ադրբեջանի վերահսկողության տակ. որից հետո.
2. Լեռնային Ղարաբաղին ժամանակավոր ստատուսի տրամադրում՝ որը կապահովի նրա անվտանգությունն ու ինքնակառավարումը. (Իսկ ինչու անմիջապես՝ մինչ այդ՝ որպես առավել կամ պակաս չափով իրական երաշխիք, չեն ճանաչում Ղարաբաղի անկախությունը գոնե շրջակա տարածքները վերադարձնելու հետ միաժամանակ կամ գոնե անմիջապես հետո, մեղմ ասած անհասկանալի է…).
3. Հայաստանի (ՀՀ-ի) և Լեռնային Ղարաբաղի միջև **միջանցքի** բացում.
4. Ապագայում ԼՂ-ի իրավական վիճակի վերջնական որոշում՝ իրավաբանորեն պարտադիր կամահայտնության (բնակչության) հիման վրա.
5. Փախստականների (հավանաբար հայ, թե՛ օտար՝ոչ բնիկ՝«ադրբեջանցի») վերադարձ իրենց նախկին բնակության վայրեր.
6. Անվտանգության միջազգային երաշխիքների ստեղծում,«Ներառյալ խաղաղությունը պահպանելուն ուղղված օպերացիան»: Այս սկզբունքներին համաձայնվել, կամ ընդհանուր առմամբ համաձայնվել եներկու կողմերն էլ (եթե իհարկե համացանցային տեղեկությունները ճիշտ են) իրենց հետագա հայտարարություններով և ստորագրություններով՝ 2 նոյեմբեր 2008թ.՝ Մայնդորֆյան հռչակագրում՝ Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի առաջին դեմքերի՝պրեզիդենտներիստորագրությամբ, 17 հունիսի 2010թ.՝ Սանկտ-Պետերբուրգյան հանդիպումներում՝ նախագահների և արտգործնախարարների մասնակցությամբ, Կանադական Մուսկոկ քաղաքում՝ 26 հունիսի 2010թ.,և մինչև այսօր, ևն:(Մերոնք կարող են ասել՝ թե դա սոսկ դիվանագիտություն է, կամ՝ դե թուղթ է էլի ստորագրել ենք, բան է էլի, ասել ենք՝ ոչ մի թիզ հող չենք տա՝ ևն, ևն… Բայց չէ որ այդ «թղթի» կամ «թղթերի» պատճառով պատերազմը՝ կոնֆլիկտը հավերժական բնույթ է ստանում՝ համարյա թե ամենօրյա զոհերով իսկ Ադրբեջանն էլ իրավունք է ստանում ամեն գնով ետ վերցնել այսպես կոչված «օկուպացված» հողերը… Ակնհայտ է նաև, որ այսպես կոչված «Մեծ տերությունների» ոչ իրավաչափ մոտեցումը՝ ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքն ու անկախությունը չճանաչելը հայտնի չափով նպաստում է «Մշտական պատերազմի» վիճակի ստեղծմանն ու շարունակմանը…):

Բնականաբար հարցի նման՝«Մադրիդյան», լուծման դեպքում ԼՂՀ-ի ապագայի, նրա հետագա գոյատևման ապահովման հիմնախնդիրը մեղմ ասած կասկածելի է թվում և պատահական չեն նախագահ Ի. Ալիևի խոսքերը (համացանցում տեղադրված): «Можно сказать, что в принципе основная часть переговоров по армяно-азербайджанскому нагорно-карабахскому конфликту завершена» և ապա: «Могу сказать, что внесенные предложения (Мадридские принципы или придложения -англ.Madrid proposals – М.Т.) в целом, **за определенными небольшими исключениями,** обеспечивают интересы Азербайджана, его территориальную целостность, возвращение всех оккупированных районов подконтроль Азербайджана».

Նման պայմաններում, երբ երկու կողմերն էլ համաձայնվել են Ադրբեջանի համար ակնհայտորեն ձեռնատու այդ համաձայնագրերին, դրանց հավանություն տվող հետագա հայտարարություններին (կրկնում ենք՝ եթե իհարկե համացանցային տեղեկությունները ճիշտ են. իսկ դրանք **պաշտոնական են**…), ապա հարց է ծագում, թե ինչո՞ւ դրանք չեն իրացվում ու…, ինչու են երբեմն-երբեմն նորից արյունոտ՝ այդ թվում առավել կամ պակաս չափով զանգվածային կոնֆլիկտներ լինում (օր.՝ ս/թ. ապրիլի սկզբներին) որոնք երկու կողմից էլ բազմաթիվ զոհեր են տանում... Ո՞վ է իրականում հրահրում նման կոնֆլիկտներ, ու՞մ է դա ձեռնտու... Ապրիլյան իրադարձությունները ցույց տվեցին, որ «էքսպերիմենտը» («փորձարարությունը») անկախ դրա հեղինակներից, չհաջողվեց. դեռ էլի պետք է սպասել…

Ինչպես արդեն ասացինք, Ադրբեջանը չէր կարող չհամաձայնվել այդ՝«Մադրիդյան» (և մյուս.) տարբերակին՝ նախկինում հայերից խլված՝ բնիկ հայկական-ազգային պատմական ազատագրված (ըստ նրանց «օկուպացված») տարածքները վերադարձվում են Ադրբեջանի հսկողության տակ՝ Ղարաբաղը որպես մի փոքրիկ կղզի՝ «միջանցքով» մնում է (եթե մնա…)«հսկայական» Ադրբեջանի կազմի մեջ մինչև ԼՂ-ի ինքնորոշման հարցի լուծումը… կմնա՞ արդյոք մինչև այդ Ղարաբաղը, թե՞ ոչ Աստված գիտի… Կամ նման վիճակով «ինքնորոշում»

արդյոք պետք է՞… Եվ կամ ԼՂՀ ժողովուրդն արդեն իր ինքնորոշման հարցը լուծել է, ի՞նչ լրացուցիչ անկախության հանրաքվե… Այլ բան է, եթե նա հանրաքվե անցկացնի ՀՀ-ի հետ **միավորվելու** հարցով՝ այն էլ ՀՀ կողմից ԼՂՀ-ի ինքնորոշման իրավունքն ու անկախությունը ճանաչելուց հետո…

Հիշատակված համաձայնագրերն առանց ԼՂ-ի մասնակցության, նրա ժողովրդի կամքը հաշվի առնելու, առոչինչ են և ԼՂՀ-ն պետք է, իմ կարծիքով, պաշտոնական հայտարարություն անի այն մասին, որ ինքը չի ճանաչում ՀՀ-ի, Ադրբեջանի և մյուս. այդ համաձայնագրերն ու հայտարարությունները՝ որպես իր օրինական իրավունքներն ու շահերը ոտնահարող և ԼՂՀ-ի՝ որպես կոնֆլիկտի **միակ և հիմնական կողմի մասնակցությամբ** պետք է սկիզբ դրվեն **նոր լիարժեք ու իրավաչափ** բանակցությունների…Անշուշտ այստեղ և հատկապես այսօր կարևոր է՝ վճռական, ԼՂՀ ղեկավարության **իրական** դիրքորոշումը:**Ըստ որում, գոնե ՀՀ-ը պետք է ճանաչի՝ առկա պայմաններում, ԼՂՀ անկախությունն ու նրան դիտի որպես կոնֆլիկտի կողմ՝ հենց նրան էլ«հանձնելով» հարցի լուծումը: 25 տարի սպասելն զուցե և արդարացված էր, բայց այսօր արդեն՝ մեր խորին համոզմամբ, սպասելը՝ ԼՂՀ-ի ինքնորոշման իրավունքն ու անկախությունը չճանաչելը, հատկապես ապրիլյան իրողություններից հետո՝ արդարացված չէ:**Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ **տերիտորիալ անձեռնմխելիության և ազգերի ինքնորոշման միջազգային-իրավական սկզբունքները միաժամանակ ներդաշնակ (ավելի ճիշտ խաղաղ) կարող են իրականացվել միայն այն դեպքում՝ եթե պետությունը, որից անջատվում է ինքնորոշվող միավորը, չի բռնանում այդ իրավունքի իրականացմանը, իսկ եթե բռնանում է, ապա գերակայում է ինքնորոշման** իրավունքը (միջազգային իրավունքի ոչմի պրոֆեսոր սրան հակառակը չի ասի՝ անաչառ լինելու դեպքում), քանզի հակառակ դեպքում այդ իրավունքը վերածվում է ոչինչ չասող, ոչմի նշանակություն չունեցող մի դատարկ ֆրազի...[1] Տերիտորիալ անձեռնմխելիության՝ **ամբողջականության** սկզբունքը որպես կանոն գործում է այն դեպքում, երբ օր.՝ պետության դեմ ագրեսիա է իրականացվում, մյուս դեպքերում դա ինքնորոշման սկզբունքին հակադրվող, կամ զուգահեռ գործող կամ հավասարակշռողէ... Այս տարրական բանը շատ լավ գիտեն ոչ միայն միջազգայնագետները, այլև, առավելևս «Ղարաբաղյան կոնֆլիկտի» բոլոր մասնակիցները... Այդ մասին ևս բավական հստակ ներկայացրել եմ նաև պ-ն Ի.Ալիևին ուղղված իմ նամակում (ռուսերեն), որը տպագրվել է 2014թ.[2]: Տարրական բան՝ եթե ղեկավարվենք տերիտորիալ անձեռնմխելիության՝**գերակայության** սկզբունքով, ապա թե՛ Ալեքսանդր Մակեդոնացու լայնածավալ պետության, թե Չինգիզ խանի պետության, Օսմանյան և ռուսական կայսրությունների, առավել ևս միջազգայնորեն ճանաչված ԽՍՀՄ-ի փլուզումն ու անկախ պետությունների ձևավորումը հակաօրինական է, միջազգային իրավունքին հակասող. սա արդենզավեշտ է… Կամ **հայկական Նախիջևանի** բնակչությունն այսօր բացարձակապես ադրբեջանցիներ են՝ անշուշտ նրանք էլ ունեն ինքնորոշման իրավունք,որքան էլ որ տարօրինակ լինի Ադրբեջանի կազմում **ադրբեջանցիների** ինքնավարությունը՝ ի դեմս Նախիջևանի Հանրապետության..., ինչպես Ղարաբաղի հայերը,նրանց՝ ադրբեջանցիներին, հո չենք կարող քշել այնտեղից. կամ ասել, քանի որ դա՝Նախիջևանը, հայկական պատմական տարածք է, պետք է անպայման ՀՀ կազմում լինեք... Այսօր սա է իրողությունը (վաղը եթե ՀՀ-ում պարսիկները և մյուս. ևս մեծամասնություն կազմեն, եթե երկիրը շարունակվի այսպես դատարկվել…, նրանք էլ են ինքնորոշման իրավունք ձեռք բերելու. ինչ մի զարմանալի բան է…):

Ժողովուրդներին պետք է անաչառ ձևով ներկայացնել իրականությունը, հնարավորություն տալ շփվելու, հաղորդակցվելու միմյանց հետ, ձեռնպահ մնալ նման հարցերն իրենց՝ կառավարող ուժերի կամ խմբավորումների շահերին ծառայեցնելուց՝ նրանց մենաշնորհը համարելուց. ի վերջո նաև պետք է հասկանալ, որ երկու ժողովուրդներն էլ «անկախ պատմությունից»«դատապարտված են» կողք-կողքի ապրելու. հակառակ մոտեցումներն (մանավանդ արհեստականորեն թշնամություն հրահրող ադրբեջանական կեղծ պատմահայրենասիրական քարոզչությունն ու ծավալապաշտական նկրտումները) ակնհայտ թշնամություն են սեփական ժողովուրդների նկատմամբ՝ հղի անկանխատեսելի ծանր հետևանքներով. այդ թվում կարող են ժողովուրդներին ոտքի հանել հենց սեփական կառավարողների դեմ, դրանից բխող բոլոր ողբերգական հետևանքներով հանդերձ...

Եթե ամփոփ ձևովներկայացնենք մեր կարծիքը «Ղարաբաղյան կոնֆլիկտի» լուծման՝ առկա ներքին և արտաքին իրողությունների պայմաններում, հարցում ապա պետք է նշենք՝

---

[1]Մանրամասն տես օր. Курс международного права в шести томах, т.2, изд. «Наука», Москва, 1967, էջ 202-233, **Г.И. Тункин**, Теория международного права. Изд. «Международные отношения», Москва, 1970, с. 70-80. նաև Международное право в документох. Изд. «Международные отношения», Москва, 1969, Международные акты о правах человека. Сборник документов 2-е издание. Изд. «НОРМА» М. 2002, **Ю. Г. Барсегов**, Право на самоопределение основа демократического решения межнациональных проблем: к проблеме Нагорного Карабаха. Изд. «Аиастан», Ереван, 1989, **А.С. Манасян,**Карабахский конфликт. Ракурсы правового решения. Изд. «Амарас», Ереван, 1998, և այլն: Իդեպ մեր աշխատություններում ելնելովմիջազգայինիրավունքիհիմնարարսկզբունքներիոգուցնաևառաջարկելենքինքնորոշմանիրավունքիազատի բականացմանը,խոչընդոտելը, առավելևսբռնությամբ, դիտելորպեսցեղասպանությանհանցակազմիտար՝ լրացնելով. «Ցեղասպանությանհանցագործությունը,կանխելը,ունայնպատժելումասին»ՄԱԿ-իհայտնիկոնվենցիանտեսօր.՝

Телунц М.М. Из истории освободительной борьбы Сюника и Арцаха. Некоторые аспекты самоопределения НКР. Изд. «Едит Принт», Ереван, 2006, с. 6-7:

[2]Տե ս **Телунц М.М.,** Письмо президенту республики Азербайджан господину Алиеву И.А. Изд. «ЭдитПринт», Ереван, 2014., նաև Телунц М.М. «Россия и освободительное движение Сюника и Арцаха…»-Գրախոսականը՝ «Հայաստանի Հանրապետություն» 25 դեկտեմբերի 2015.

Նախ ակնհայտ է, որ անկախ հայտնի շրջանակների և անձանց որոշ ամպագորգոռ հայտարարություններից, ադրբեջանցիները «ապրիլյան պատերազմում» որոշ հաջողությունների հասան՝ հաղթեցին՝ թեկուզ և մեկ-երկու «պոստ գրավելով»... Այն, որ նրանք շատ չկարողացան խորանալ, դա իրոք մեր ժողովրդի ոգու պոռթկման արդյունքն էր.* իսկ այսպես անվերջ շարունակվել չի կարող. մանավանդ երկրի ներսոցիալական մեղմ ասած ոչ այնքան բարենպաստ վիճակը հաշվի առնելով... (թեպետ չեմ կարծում, թե այդ առումով Ադրբեջանում իրավիճակն իդեալական է…որը, սակայն, մեզ համար բնավ էլ մխիթարություն չէ…):

Երբ մայիսի 16-ի «հանդիպման» առիթով մի մտավորականի հարցրի թե Ղարաբաղյան հարցով նոր հանդիպմամբ՝ ապրիլյան դեպքերից հետո, ինչեն պայմանավորվել ասաց. «պայմանավորվել են, որ հանդիպեն»- «**Հանդիպել են** պայմանավորվել, որ **հանդիպեն**». համարյա ծաղր է:

Մադրիդյան, Մայնդորֆյան, Կազանի ևն, սկզբունքները, համաձայնագրերը պատերազմի իմիտացիաներով,«դիվանագիտական գաղտնիքներով»չես քողարկի՝ գոնե հիմա… Մարդիկ շարունակում են գնալ, զոհվել հստակորեն չիմանալով թե իրականում ինչ է կատարվում դիվանագիտության բնագավառում… Հիմնախնդրի լուծման ուղիներն առկա իրավիճակում մենք համարում ենք հետևյալը.

1. Ինչպես ակնարկեցի արդեն, ԼՂՀ-ը հանդես է գալիս հայտարարությամբ, որ ինքը չի ճանաչում մեր **հիշատակած,** իր ինքնորոշման իրավունքին ակնհայտորեն անհարիր համաձայնագրերը, հայտարարությունները, որոնք արվել կամ ստորագրվել են առանց իր մասնակցության: Լավ կլիներ, անշուշտ, որ դրան նախորդեր ՀՀ-ի հայտարարությունը ԼՂՀ-ի անկախությունն ճանաչելուն ուղղված (ըստ որում, ներառյալ՝ **ազատագրված** տարածքներում): Դա պետք է սկիզբ դնի բանակցությունների որակապես նոր փուլի՝ եթե, անշուշտ, ԼՂՀ ղեկավարությունը դրան համաձայն է…

2. Կամ եթե ԼՂՀ-ն որոշ տարածքներ պետք է զիջի,* ապա դրան պետք է **նախորդի** Ադրբեջանի կողմից ԼՂՀ-ի անկախության ճանաչումը, թեկուզ միայն որպես երաշխիք այն բանի, որ Ադրբեջանի հետագա հնարավոր ոտնձգությունները կդիտվեն որպես **ագրեսիա** միջազգային-իրավական ճանաչում ստացած պետության՝ ԼՂՀ-ի դեմ**… Ի դեպ տարբերակ է նաև ԼՂՀ-ն՝ ազատագրված բոլոր տարածքներով իրավաբանորեն և փաստորեն ՀՀ-ին միանալը, մանավանդրանց՝ ազատագրված տարածքներից զգալի մասը**՝Այնունիքի տարածքներն են՝ օր.573կմ² Գորիսի՝ պատմական Հաբանդի մասն են (նախկին Լաչինի՝ պատմական հայկական Աղահեջք, Կուբաթլի՝ Հաբանդ, Բաղք, ևն: Երևի այունեցիք՝ գորիսեցիք, մտածում ենդրանք՝ ազատագրված տարածքները, «Փարիզի հաշտության կոնֆերանսում ստանալ…»): Ինչո՞ւ ենք «ամաչում». քանի դեռ դրանք չենք միացրել ՀՀ-ին՝ վիճակը մնալու է պայթունավտանգ… Մենք ունենք նաև ՀՀ-ի և ԼՂՀ-ի որոշումները՝ Հայաստանի և ԼՂՀ-ի միավորման մասին. ինչո՞ւ դա չենք իրականացնում՝ չէոր այդհողերիազատագրում, արդեն փաստացի միացում՝ միավորում է տեղի ունեցել և մնում է **միայն նոր իրավական ակտով դա ճանաչել՝ արձանագրել:**Իհարկե այս դեպքում,ինչպես, բնականաբար, ԼՂՀ ճանաչման դեպքում, ՀՀ, գուցե նաև ԼՂՀ, ղեկավարությունըկարող է բավական ծանր վիճակի մեջ ընկնել՝ քանզի «Մինսկի խումբն» ու «Մեծ տերությունները» կարող են ասել. «Այս ի՞նչ եք անում՝ ստորագրում եք «հողերը հանձնելու», (ինչպես ժողովուրդն է ասում – Մ.Թ.) մասին, հետո ուրիշ բան եք անում… Գուցե նաև մի շարք այլ տհաճ վիճակներ ստեղծվեն**…»: Բայց սա այնդեպքն է, երբ իրոք նպատակն արդարացնում է միջոցները՝ ինչպես իտալացի հայտնի մտածողն էր ասում**… Ինչ որ է.այս 25 տարիների ընթացքում՝ ավելի ճիշտ ազատագրումից հետո,ըստ երևույթին արմատական քայլեր չեն ձեռնարկվել մեր երկրների հզորացման, սոցիալական միասնության ապահովման ուղղությամբ՝ որն անշուշտ ապագա արհավիրքների դիմակայման ամենահուսալի գրավականն է:

3. Կամ մեկ այլ տարբերակ՝Ադրբեջանը ճանաչում է ԼՂՀ անկախությունն և նույն ակտով ԼՂՀ-ը ֆեդերատիվ հիմունքներով մտնում է Ադրբեջանի կազմի մեջ՝ ազատագրված բոլոր տարածքներով, նաև Շահումյանի շրջանով և **ֆեդերացիայի սուբյեկտի իրավական վիճակով** կարգավորում է մյուս հարցերը կամ վիճելի թվացող հարցերը: Սա իհարկե Ղարաբաղի համար հայտնի չափով ծանր տարբերակ կլինի, կամ կարող է այդպիսին թվալ, բայց դաավելի լավ է, քանայս հեղհեղուկվիճակը, անպտուղ հանդիպումներն ուպատերազմի մշտական վտանգը, ինչպես և անընդհատ՝համարյա ամեն օր, զոհեր խլող պատերազմներն ու դրանց հնարավոր իմիտացիաները…

Անշուշտ այս՝երրորդ տարբերակի դեպքում երկկողմ երաշխիքների՝ թե՛ Ղարաբաղի և թե՛ Ադրբեջանի համար, ստեղծման նպատակով ճիշտ կլիներ նույն հիմունքներով Նախիջևանի ՀՀ կազմիմեջմտնելը (եթեմեծամասնություն կազմող հայ բնակչությամբ Ղարաբաղը թողնում ես Ադրբեջանի կազմում, ապա ինչ մի տարօրինակ բանկա Նախիջևանը՝ ադրբեջանական բնակչությամբ և Ադրբեջանի հետ ոչ մի սահման չունեցող, ֆեդերատիվ հիմունքներով ՀՀ կազմ մտնելը):

Հայ ժողովուրդն անշուշտ կլինի Ղարաբաղի՝ Արցախի հայության հետ՝ անկախ ղեկավարության, կամ այս կամ այն ղեկավարի լավ կամ վատ լինելուց, բայց հիմնախնդրի լուծումն այսօր արդեն պետք է հանձնել Ղարաբաղին և ոչ թե ՀՀ-ը՝եթե իհարկե ԼՂՀ ղեկավարությունը չի առարկում…

---

*Եվ կամ գուցե «նախնական համաձայնության» (Աստված մի արասցե…) արդյունք՝ քանզի ադրբեջանցիների «շատ խորանալու» դեպքում ՀՀ-ում և ԼՂՀ-ում կարող էր կառավարող վերնախավերի համար կործանարար ու աննախադեպ սոցիալական պայթյուն բռնկվել… Իհարկե այսպես կոչված «հողերի հանձնումը» ունի նաև «դրական կողմ» - ժողովուրդը վերջնականապես կսկսի զբաղվել ներքին հիմնախնդիրներով…

*Ի դեպ ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև ընկած ազատագրված տարածքների հանձնումը ոչ միայն վտանգի տակ է դնում ԼՂՀ-ի գոյությունը, այլև հետագայում կարող է լուրջ վտանգ ստեղծել նաև Զանգեզուրի համար՝ որի նկատմամբ Ադրբեջան-Թուրքիայի գիշատչական նկրտումները հայտնի են…

Հիմնախնդրի լուծումն այսպիսի վիճակով թողնելը, կամ «Մադրիդյան սկզբունքներով» այնպես, ինչպես դրանք այսօր կան, «լուծումը»,մեր խորին համոզմամբ հղի են առավել լայնածավալ կոնֆլիկտներով ու անկանխատեսելի՝ աննախադեպ ծանր հետևանքներով՝ այդ թվում հավերժական պատերազմական վիճակով…

Անշուշտ իրավացի է ՀՀ-ում հրատարակվող **«Գործընթաց»**թերթն, որն իր 2016թ. մայիսի 17-ի համարում գրում է. «Քանի դեռ ԼՂՀ-ն չի մասնակցում բուն բանակցություններին, խաղաղության հաստատման ջանքերը զուտ ձևական ժամանակ են ձգում, սահմանին շարունակվում են զոհվել զինվորներ, որի պատասխանատվությունը կրում են այն սուբյեկտները, ովքեր խորշում են իրականությունը գնահատել համարժեք»:

ԼՂՀ-ընկախ ու կողմ չճանաչելը, մեծ հաշվով նշանակում է միջազգային փաստաթղթերում ամրագրված նրա ինքնորոշման իրավունքի չճանաչում… Ահա թե ինչու զոնե այսօր, զոնե ՀՀ-ը պետք է ճանաչի այդ իրավունքը, որպեսզի՝

1. նախ՝ նա՝ Հայաստանի Հանրապետությունը, լիարժեք՝ օրինական՝ միջազգային-իրավական և ներպետական կապերի, հարաբերությունների մեջ մտնի ԼՂՀ-ի հետ.
2. երկրորդ՝ իրավաբանորեն հնարավորություն տաԼՂՀ-ինազատվելու իրվզին փաթաթված Մադրիդից, Մայնդորֆից ևն.

ՀՀ-ն չի ճանաչում ԼՂՀ-ի անկախությունը, որովհետև «Մեծ տերությունների» և իմ կարծիքով Ադրբեջանի հետ, ուրիշ բան է պայմանավորվել և ճանաչելու դեպքում կխախտվեն այդ պայմանավորվածությունները… Իսկ ինչո՞ւ է այդպես պայմանավորվել. մեր «առաջնորդներից» բոլորս ենք պատասխան ուզում…

Անշուշտ թե՛ ՀՀ-ն և թե՛ Ադրբեջանն ուժեղ պետություններ չեն՝թե՛ արտաքին -քաղաքական և թե՛ առկա ներսոցիալական վիճակի առումով. բայց դա չի նշանակում, թե նրանք խաղալիք պետք է դարձնեն իրենց պետությունների ու ժողովուրդների շահերը «Մեծ տերությունների» ձեռքին: Չի կարելի մոռանալ նաև, որ այսպես կոչված «Մեծ տերությունները» ևս հայտնի չափով կախված են «փոքրերից». և, ինչպես այդ կախվածությունը խելացի օգտագործելով, այնպես էլ հատկապես ներպետական իմաստավորված խելացի կառավարում ու կարգեր ստեղծելով, բնականաբար նաև ներսոցիալական միասնություն ստեղծելով, միանգամայն հնարավոր է լուրջ գործոն դառնալ նաև մեծ տերությունների հետ հարաբերություններում և առավելկամպակաս չափով հաջողկերպովլուծել ծագած հիմնախնդիրները: Մենք, ավելի ճիշտիշխանության անցած, անկասկած նաև հարստացած,«մեր» ղեկավարությունը (գուցե նաև, մեր կարծիքով, ԼՂՀ), մի տեսակ վախկոտ է դարձել 1988-ի համեմատ… Մինչդեռ այդպես հարց չի լուծվի: Մի քանի ամիս առաջ Գերմանիան համարձակորեն իր վրա վերցրեց «ուրիշի դարդը»՝ ճանաչեց օսմանյան թուրքերի կողմից իրականացրած հայերի և մյուս քրիստոնյա փոքրամասնությունների ցեղասպանությունը. հակասական են նաև ռուս-թուրքական և ռուս-ամերիկյան հարաբերությունները՝ չնայած որոշ «սիլի-բիլիների».իր հերթին Եվրոպան ևս կարծես թե ուզում է ճանաչել թուրքերին… (ըստ երևույթին ոչ միայն պետք է օգտվել ռուս-ամերիկյան հակամարտություններից՝ հակասություններից, այլև նկատի ունենալ, որ դրա արդյունքում մասնավորապես Ռուսաստան-Թուրքիա «մերձեցումները» կարող են երկդիմի Բյուզանդիայի «ժառանգորդ» Ռուսաստանին մղել ի վնաս մեզ անկանխատեսելի քայլերի… Ինչ կարող ես անել յուրաքանչյուր նորմալ երկրի համար՝ իր ազգային շահն ավելի բարձր է…): Կարծում ենք, որ այդ (և մի շարք այլ) միջազգային-քաղաքական գործոնները՝ պայմանները ճիշտ գնահատելու դեպքում կարող են բավական նպաստավոր լինել մեզ համար. մասնավորապես նաև հիշեցնելու, որ Ղարաբաղն ու Նախիջևանը ևս (մասնավորապես դրանք Ադրբեջանին միացնելը) վերջին հաշվով Օսմանյան թուրքերի՝ նաև Արևելյան Հայաստանում իր «Կովկասյան դաշնակից»՝ «փոքր եղբայր» ադրբեջանցիների հետ իրականացրած հայերի **ցեղասպանության** կամ պանթուրքիզմի ընդհանուր ծրագրի հետևանքն են[1]: Հիմնախնդիրը պետք է առաջադրել նաև այդ տեսանկյունից: Ըստ որում, ոչ ոքի համար, զոնե մեզ համար, գաղտնիք չեն այն անառարկելի պատմական փաստերը, որոնք ապացուցում են թուրքերի և «ադրբեջանցիների» կողմից Անդրկովկասում իր ազգային-պատմական հողերի վրա (այդ թվում բնականաբար Նախիջևանում և Արցախ-Ղարաբաղում) բնակվող բնիկներին՝ հայերին կոտորելու, ուծացնելու, նրանց տարածքները բաժան-բաժան անելու, վերաբաժանումների և այլ միջոցներով դուրս մղելու պանթյուրքիստական ծրագրերը…

Ի դեպ ապրիլյան «պատերազմը» ևս բավարար հիմք էր ՀՀ-ի և ԼՂՀ-ի համար վճռական քայլեր՝ զոնե իրավաքաղաքական բնույթի, ձեռնարկելու. հավանաբար այստեղ ևս նորից խանգարեցին «միջազգային համաձայնությունները…»: Ապրիլյան իրադարձությունները հավանաբար ի հեճուկս Ադրբեջանի ղեկավարության սպասելիքների, իսկ գուցե և ի զարմանս մեր ղեկավարության…, ցույց տվեցին, որ մեր ժողովուրդը պատրաստ չէ հողեր հանձնելու՝ Մադրիդյան սկզբունքերին կուլ գնալու:Եվ այս առումով՝ զինադադարը խաբուսիկ է. այնպետք է արդյունավետորեն օգտագործվի երկրի, ավելի ճիշտ մեր երկրների հզորացման համար, որին էլ պետք է ծառայեն նաև, կամ առաջին հերթին, համատարած գործազրկության, աղքատության ու պարբերական արտագաղթի պայմաններում միլիոնատերեր, միլիարդատերեր դարձած մեր «բիրդան աղաների» առասպելական կարճ ժամկետում կուտակած հարստությունները…

x x x

Անշուշտ երկրի (ցանկացած) ներսոցիալական,ազգային միասնությունը, միասնականությունը երկրի, պետության հուսալի գոյատևման, հզորության ամենամեծ գրավականն է: Բայց այդմիասնությունը չի կարող

[x]Այսպես կոչված «Մադրիդյան սկզբունքներն»հետագա ակտերնիրականումԼՂՀ-ի վերացմանն են տանում և ոչ թե հիմնախնդրիարդարացի լուծմանը…

[1]Տես օր.՝ **Սերգեյ Ավագյան**, Ցեղասպանությունն Արևելյան Հայաստանում, Երևան, ՎՄՎ – ՊՐԻՆՏ հրատ., 2014 և ուրիշ.:

ապահովվել կարգախոսներով, նույնիսկ արտաքուստ շատինչեղ. անցյալի հերոսական էջերը հիշելովկամ թմբկահարելով՝ այն պայմաններում, երբ այդ միասնականությունը խախտվել է տիրապետող՝ Սահմանադրությամբևմյուս օրենքներով պաշտպանվող այնպիսի կարգերով, որոնք հանգեցրել են աղետալի իրավիճակի և մասնավորապես գնալով ավելի են խորացնում ներսոցիալական, մասնավորապես գույքային, աննորմալ բևեռացումները, բերելով զանգվածային աղքատություն, գործազրկություն, մարդկանց մղում սեփական անկախ երկրից փախչելուն. ևն, ևն: **Չի կարող միասնություն լինել ավազակի և ավազակայինհարձակման՝կողոպուտի ենթարկվածի** միջև…իսկ նման պայմաններում, անգամ հազարամյակներով բյուրեղացած հայրենասիրական ոգին էլ վաղ թեուշ սպառվում է…

Միասնականության ապահովումը նրահամար չէ, որինչ-որմեկիդեմկոիվ սկսենք. դա ընդհանրապես ժողովրդի, երկրի ու պետության ներքին և արտաքին վիճակի առումովառավել կամպակաս չափով հուսալի գոյատևման գրավականն է՝ դա նրանց գոյատևման՝ կյանքի անխախտելի հիմքն է, նախադրյալը: Այդ պայմանի չապահովումը ոչ միայն սոցիալական ավերիչ ցնցումների պատճառ կարող է դառնալ, այլև երկիրը, պետությունը դարձնում է հնարավոր աղետներին դիմակայելուն անընդունակ…

Ձևական ժողովրդաիշխանության հռչակումն (օր.՝ՀՀ Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածներ) ու **իրականում** իրավաբանորենու հատկապես փաստորեն ժողովրդի հեռացումն իշխանության կազմակերպմանն ու դրա՝ իշխանության իրականացման նկատմամբ**գործուն** հսկողությունից. ազգային, ներսոցիալական միասնությունը խարխլող ամենավտանգավոր գործոններից է, եթե ոչ ամենավտանգավորը… ՀՀ-ում օր.՝ **այս 25 տարիների անկախությանգործընթացը, որի «պսակը» 6.XII.2015թ. ընդունված Սահմանադրությունը հանդիսացավ,** ընթացել է և շարունակվում է ընթանալ հենց այդ վտանգավոր ճանապարհով՝ որպես կանոն ի շահ կառավարող՝ տնտեսապես և քաղաքականապես իշխող խմբավորման կամ խմբավորումների. հենց դրանում պետք է փնտրել երկրի այսօրվա և վաղվա ավելի աղետալի վիճակի գաղտնիքը...[1] Մեր դժբախտությունը, մեր ծանր վիճակը, հիմնախնդիրներն ու անհաջողություններն իրավաբանորեն և փաստորեն գոյություն ունեցող վատ կարգերի ու հարաբերությունների մեջ է՝ դրանց պատճառները դրա, մեր մեջ պետք է փնտրել ևոչ թե իրենց ազգային-պետական շահերը պաշտպանող մեր «խնամակալների», «հոգաբարձուների» (Ռուսաստան և ուրիշ.) մեր նկատմամբ պակաս հոգատար լինելու... Սա նույնիսկ անպատվաբեր է, անարժանապատիվ...

Մեր երկրները կարիք ունեն, վաղուց արդեն դրա կարիքն ու հրատապությունը կար և կա, **արմատական** սոցիալ-տնտեսական, պետահիրավական՝ **իրական ժողովրդաիշխանական** փոփոխությունների՝ սկսած բազմակացութաձևության հիմքի վրա **սեփական** արդյունաբերության, առաջին հերթին ծանր, այդ թվում **պետական**, ստեղծումից, մինչև գյուղատնտեսության վերափոխումները՝ դարձյալ բազմակացութաձև սեփականության հիմքի վրա, պետական համակարգի լուրջ վերափոխումներից՝ ընտրովի դատական համակարգի ստեղծում, ժողովրդական ներկայացուցիչների թվի ընդլայնում՝ նրանց ընտրությունն **անմիջապես** ժողովրդի կողմից և ոչ թե կուսակցությունների միջոցով. լուրջ փոփոխություններ մյուս բնագավառներում, ևն: Սա պետք է լինի այս 25 տարիների ամփոփումից բխող հիմնական հետևությունը:

Օր.՝ ԽՍՀՄ փլուզման արդյունքում **այդքան** հեշտ ստացված ՀՀ «անկախությունը», որը թմբկահարվում է իբրև թե որպես մեր ջանքերի արդյունք, **իրականում պետք է ստեղծվի**. ցավոք այն երկրի ամրության, հզորության առումով այս 25 տարիներին չի ստեղծվել...

Երկիրը, պետությունն ուժեղէ **իրհարուստ և ներսոցիալապես միաձույլ ժողովուրդով,** իսկ մենք այսօր ունենք ինքնատարագրվող ժողովուրդ, զանգվածային գործազրկության, աղքատության պայմաններում առասպելական կարճ ժամկետում միլիոնատերեր, միլիարդատերեր դարձած օլիգարխներ, հարուստ՝ ուռճացած քրեածին բոռեր. ևն, ևն: Արտաքին հայտնի անբարենպաստ միջավայրումգտնվող, դրա հետ մեկտեղ խարխլված ու խարխլվող ներսոցիալական վիճակով երկիրը, ժողովուրդն ու պետությունը ոչ հեռավոր ապագայում լիովին անզոր կլինեն դիմակայելու հնարավոր աղետներին, իրենց նետված մարտահրավերներին: Ապրիլյան «էպիզոդը» դրա իրական նախանշաններից էր…

Սա՝ երկրում հրատապարմատական փոփոխություններիիրականացման անհրաժեշտությունն էլ, ինչպես արդեն նշեցի, պետք է լինի այս 25 տարիների(«հոբելյանական» տարեթվի)**, նաև մեր պատմական զարգացման փորձիցբխող, միակ կամ հիմնական հետևությունը.** այլապես համատարած աղետն անխուսափելի է...

Մենքփաստորեն ու իրավաբանորեն ընթանում ենք սխալ, անհեռանկար, անհուսալի ուաղետաբեր ճանապարհով՝ իրեն չարդարացրած սոցիալ-տնտեսական, պետահիրավական կարգերով, ի դեպ դա նշում են նաև ամենևին էլ սոցիալիզմի ու կոմունիզմի ջատագով չհանդիսացող մտածողները, դրանք պետք է որակապես

[1]Այդ և մյուս հիմնախնդիրների մասին ավելի մանրամասն տես մեր աշխատությունները՝ մասնավորապես՝ **Մ.Մ.Թելունց**, Աշխատությունների ժողովածու, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան, 2011.Գրախոսականը՝ «Հայաստանի Հանրապետություն», 2012, N62, նաև՝ **Ս.Հովսեփյան**, ՀՀՇ-ն և Հայոց Մեծ ողբերգությունը, «Լուսաբաց»հրատարակչություն, Երևան, 2002, **Էդիկ Մինասյան**, Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2013 և ուրիշ.: Հարկ է նաև նկատի ունենալ, որ ստեղծված վիճակը, տագնապահարույց խնդիրները, ոչ միայն ՀՀ-ում, սոսկ սուբյեկտիվ գործոնների հետևանք են, այլև առավելապես, զարգացման պատմական օրինաչափություններին հակասող սոցիալ-տնտեսական, պետահիրավական կարգերի, որոնք ստեղծվեցին հետխորհրդային երկրներում:

փոխվեն՝ անկանխատեսելի առավել ծանր հետևանքներով հղի վիճակներից խուսափելու համար*: Անկասկած թե՛ պատմությունը և թե՛ ժամանակակինց միջազգային իրավունքը ղարաբաղյան հարցի արդարացի՝հայամետ լուծման, մեր ազգային-պատմական շահերի օգտին են սակայն, ինչպես որ դա մի ավելորդ անգամ հաստատում է այս 25 տարիների փորձը, պատրանքներվ տարվել չի կարելի… Մեր երկրների, պետությունների, ժողովրդի առջև ծառացած ներքին և արտաքին հիմնախնդիրների, այդ թվում ազգային-պատմական, բնականաբար և Ղարաբաղյան հարցի արդարացի՝ հայամետ լուծման միակ հուսալի գրավականը՝ իրական ոչ թե կարգախոսային, ներազգային, ներսոցիալական միասնության ստեղծումն է, դրան խոչընդոտող «նոր կարգերի» հարաբերությունների բերած ազգավնաս գործոնների վերացումը. այդ վնասակար գործոնները, որոնք կարող են ուրիշների համար կործանարար չլինել, հանգեցրել են հասարակության պառակտման, հուսահատության, գույքային աննորմալ բևեռացման, գործազրկության, աղքատության, անսանձ քրեածին մթնոլորտի, շարունակվող արտագաղթի, ազգային-պատմական, սոցիալ-իրավական արժեհամակարգի վտանգավոր անկմանն, մեր երկրի համար կարող են աղետաբեր լինել: Դրանք պետք է վերացվեն կամ գոնե էապես մեղմվեն սոցիալ-տնտեսական, պետահիրավական, արմատական, իրական ժողովրդահիշխանական փոփոխությունների իրականացմամբ՝որոնք անառարկելիորեն կնպաստեն խարխլված ազգային, ներսոցիալական միասնության վերականգմանն ու ամրապնդմանը՝ ի շահ մեր ժողովրդի ու նորանկախ պետականության: Բնականաբար այդ կտրվածքով, նոր արմատական մոտեցումներ պետք է ձևավորվեն նաև Ղարաբաղյան հարցում: Ըստ որում այդ հարցում այսօր ավելի մեծ ակտիվություն, խանդավառություն և համաժողովրդական վճռական ու անկոտրում կամքի դրսևորում է պահանջվում, քան նույնիսկ 1988-ական թթ.:

Առկա և խորացող ճգնաժամային, ճղճիմ, ճահճային ու խղճուկ վիճակը, որպիսին կարծում եմ, որ ոչ ոքի համար գաղտնիք չէ, պետք է հաղթահարվի առավելապես ներքին միջոցներով, որակապես նոր մտածողությամբ, նոր արմատական քայլերով, այլապես մենք ոչ միայն մահացու վտանգի տակ կդնենք մեր ազգային-պատմական խնդիրների լուծումը, այլև նույնիսկ հայկական նորանկախ պետականության ապագան… Պետությունը որպես իրավաքաղաքական կազմակերպություն, որպես մարդկանց, քաղաքական և նյութական կցորդների՝ ապարատով, առավել ևս սքողված կամ անսքող կերպով տոտալ բռնություն կիրառելու գործառույթով օժտված մարմին, դառնում է չարիք, եթե այն հասարակությանը, ժողովրդին ծառայող մարմնից վերածվում է նրանից կտրված, նրա վրա իշխող մարմնի: Մեզ թե՛ ՀՀ-ում, թե՛ ԼՂՀ-ում անհրաժեշտ է (վաղուց արդեն անհրաժեշտ էր) լրջորեն, անաչառ վերլուծել ներքաղաքական, ներպետական հարաբերությունները՝ վիճակը և, քանի դեռ այսպես կոչված «մեծ տերությունները» ավանդական զգվոտոցների մեջ են, արմատական քայլեր ձեռնարկել մեր փոքրիկ երկրների վիճակն առավել կամ պակաս չափով մխիթարական, առավել կամ պակաս չափով անվտանգ դարձնելու համար…

Չպետք է մոռանալ նաև, որ այսօրվա մեր «բիրդան աղաների» պաշտամունքը ոչ թե հայրենասիրությունն ու Ղարաբաղն է, այլև մասնավոր սեփականությունն ու փողը. (ոչ մի անգամ՝ ոչ թուրքերի և ոչ էլ պարսիկների տիրապետության ժամանակ երկրի մակերեսն ու ընդերքը անզուսպ հարստացմանտենչով այնպիսի անխիղճ կողոպուտի չի ենթարկվել, ինչպես այժմ՝ ահավոր վնաս է հասցվում բնությանը, կենսոլորտին, ավերվում, անհետանում են բնակավայրեր. մահացու վտանգի տակ է դրվում երկրի՝ նրա ապագա սերնդի գոյատևումը… գոնե այդ թալանված՝ մեր «բիրդան աղաների» և օտարների գրպանները լցվող միջոցների մի մասը պետք է ներդրվի երկրի, բնականաբար նաև Ղարաբաղի պաշտպանության, անվտանգության ապահովման համար) ուստի ժողովուրդը ինքը պետք է առանց հապաղելու իր բախտի անիվը վերցնի իր ձեռքը…

Եզրափակելով մեր խոսքը ես ևս շնորհավորում եմ ԼՂՀ քաջարի ժողովրդին իր անկախության 25-ամյա հոբելյանի առիթով և ցանկանում նրան ուժ ու կորով բոլոր հնարավոր ներքին և արտաքին արհավիրքներին դիմակայելու, մեր ազգային պատմական բոլոր տարածքներն ազատագրելու ազգապահպան գործընթացում:

Ամենայն բարիք Ձեզ:

*Բարեբախտաբար միայն ես չէ որ դա ասում եմ. քիչ չեն այն մարդիկ՝ մտավորականներ և այլք, որոնք չեն երկնչում անաչառորեն տագնապ հնչեցնելու՝ այդ թվում իրենց հրապարակային աշխատություններում ելույթներում ևն: